Social Security

Ինչպես Մենք Որոշում Ենք Ձեր Հաշմանդամության Շարունակումը

www.socialsecurity.gov

Ինչպես Մենք Որոշում Ենք Ձեր Հաշմանդամության Շարունակումը

Հաւանաբար դուք կարդում եք այս թերթիկը, որովհետեւ դուք վերջերս մեզնից ստացել եք մի նամակ՝ ըսելով թե մենք պատրաստվում ենք վերաքննելու ձեր առողջական վիճակը: Օրենքը պահանջում է որ ատեն-ատեն մենք վերաքննենք հաշմանդամության նպաստ ստացող բոլոր մարդկանց առողջական վիճակը՝ վստահելու թե նրանց հիւանթությունը շարունակվում է:

Ընդհանրապէս, եթե ձեր առողջությունը չի բարելավվել կամ եթե ձեր հաշմանդամությունը ձեզ ետ է պահում աշխատելուց, դուք կ'շարունակեք ստանալ ձեր նպաստները:

Մենք հավաքում ենք տեղեկությունը

Նախկան որոշում առնելը, մենք հավաքելու ենք նոր տեղեկություն ձեր առողջական վիճակի մասին:

- Մենք դիմելու ենք ձեր բժիշկներին, հիվանդանոցներին եւ բժշկական այլ աղբյուրներին ստանալու ձեր բժշկական տեղեկությունները : Մենք իրենց հարցնելու ենք, թե որքանով է ձեր առողջական վիճակը սահմանափակում ձեր գործունեությունը եւ ինչ բժշկական բուժում դուք ստացել եք:
- Եթե յաւելեալ տեղեկության անհրաժեշտությունը զգանք, մենք ձեզ ուղարկում ենք հատուկ քննության որի ծախսերը մենք վճարում ենք:

Մենք ուսումնասիրում ենք փաստերը

Մենք ուսումնասիրում ենք ձեր անցեալի առողջական վիճակը (մեր վերջին քննության ժամանակից): Մենք նաեւ նկատի առնում ենք որեւէ նոր բարդություններ որ դուք ունեցել եք այդ ժամանակից ի վէր:

Մեր նպատակն է որոշել ձեր առողջական վիճակի բարելավումը: Եթե որոշենք թէ ձեր առողջական վիճակը բարելավվել է, պետք է նաեւ որոշենք եթե ձեր առողջության բարելավումը կը հնարավորէ ձեր աշխատանքի վերադարձը:

Մենք նաեւ ուսումնասիրելու ենք ձեր առողջական վիճակի ընդհանուր պայմանները եւ ձեր կարողությունը աշխատելու տարբեր արհեստների մէջ: Այն ընդգրկում է ձեր նախկին կատարած աշխատանքը, ինչպես նաեւ այլ աշխատանք որ դուք կարող եք կատարել ներկայում:

Ինչպես է ձեր նպաստները ազդվում

ձեր նպաստները կդադրեն եթե ձեր առողջական վիճակը բարելավվել է այն աստիճան, որ մենք որոշում ենք թե դուք կարող եք աշխատել:

Ձեր հաշմանդամության նպաստները կդադրեն նաեւ հետեւյալ դէպքերում.

- Դուք օգտվել եք բժշկական յառաջդիմություններից, կամ արհեստական վերահաստատության եւ արուեստագիտության միջոցներից (vocational rehabilitation and technology) եւ այդ պատճառով կարող եք աշխատել:
- Ձեզ հաշմանդամության նպաստներ տալու կամ շարունակելու մեր առաջին որոշմը սխալ էր:
- Դուք չեք հետեւում բժիշկի կողմից նշանակված բուժման ծրագրին առանց ընդունելի պատճառի, եւ եթե բծշկական ծրագրին հետեւէիք ներկայում կարող կը լինէիք աշխատելու:

(շրջել)

- Դուք անցյալին մեզ կեղծ ու սխալ տեղեկություններ տալով ապահովված եք ձեր նպաստները:
- Դուք մեզ հետ չեք համագործակցում եւ չունեք ընդունելի պատճառ չհամագործակցելու:
- Դուք աշխատում եք եւ ձեր միջին ամսվայ հասույթը ցույց է տալիս որ դուք ունեք ,բաւարար նիւթական հասույթե (substantial gainful) ստանալու կարողությունը: Մեր կողմից բաւարար նիւթական հասույթ համարվող գումարը ամեն տարի փոփոխվում է: Այս տարուայ արժէքներու համար հաճեցէք կարդալ *Տեղեկությունների Նորություն* (հրապարակության համար 05-10003-AM): Սակայն, այս աշխատանքը չի ազդելու Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) ստացողների նպաստները:

Դուք կարող եք բողոքել մեր վճիռի որոշումը եթե մենք ձեր հաշմանդամության նպաստները դադրեցնենք: Դա նշանակում է որ դուք կարող եք խնդրել մեզնից վերաքննելու ձեր պարագան: Մեր որոշման նամակը մանրամասն բացատրում է ձեր բողոքարկելու իրավունքներն ու միջոցները:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ

հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՚կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10053-AM
How We Decide If You Are Still Disabled (Armenian)
January 2005